

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Վանաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին» ավագանու որոշման նախագծի հանրային քննարկումների

ք. Վանաձոր

03.12.2019թ

Սահմանված կարգով հանրային քննարկումների հրավերը տեղադրվել է համայնքապետարանի պաշտոնական կայքում, հայտարարությունը փակցվել է համայնքապետարանի շենքի մուտքին և շրջանառվել ֆեյսբուքյան էջերում:

Համապատասխան հայտարարությամբ նախապես իրազեկված անձանց մասնակցությամբ հանրային քննարկումը սկսվեց ժամը 11.10 –ին, ավագանու նիստերի դահլիճում:

Քննարկման ընթացքը .

Քննարկումները վարում էր համայնքի ղեկավարի լիազոր ներկայացուցիչ , համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը: Հանրային լսումներին մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմի պաշտոնատար անձինք , քաղաքի Տավրոս և Տարոն -3 թաղամասերի բնակիչներ:

Վահե Գրիգորյանը տեղեկացրեց, որ սահմանված ժամկետում գրավոր առաջարկություններ չեն ստացվել և քննարկման մասնակիցներին համառոտ ներկայացրեց քաղաքի 2020 թվականի բյուջեի նախագծում առկա հիմնական թվային տվյալները:

2020 թվականի բյուջեն նախատեսել է եկամուտների զգալի աճ: Մասնավորապես, վարչական բյուջեի մասով 2019 թվականի շուրջ 2 մլրդ 576 մլն դրամի դիմաց նախատեսված է շուրջ 2 մլրդ 824 մլն դրամ : Շուրջ 4 տոկոս աճ է նախատեսված սեփական եկամուտների մասով: Տեղեկացվեց նաև , որ 2020 թվականի համար պետական դոտացիոն հատկացումները կկազմեն շուրջ 1 մլրդ 712 մլն դրամ, ինչը շուրջ 204 մլն դրամով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2020 թվականի բյուջեի նախագիծը կազմվել էր մինչև 2019 թվականի նոյեմբերի 28-ի ավագանու նիստը, ուր 20 տոկոսով բարձրացվեցին համայնքապետարանի շուրջ 1300 աշխատակիցների աշխատավարձերը, հետևաբար, բյուջեի նախագծում հնարավոր չէր նպատակային հատկացում նախատեսել: Սակայն բյուջեի ծախսային մասում առկա է լրացուցիչ շուրջ 376 մլն դրամ պահուստային ֆոնդ, որը կարող է տրամադրվել աշխատավարձերի բարձրացումը ֆինանսավորելու նպատակով: Օրենքով նախատեսված նվազագույն աշխատավարձի բարձրացումը կփոխհատուցվի պետական բյուջեից, իսկ ոչ նվազագույն աշխատավարձերի բարձրացումը կֆինանսավորվի շուրջ 269 մլն դրամի չափով՝ համայնքային բյուջեից:

Բյուջեի նախագծի ներկայացումից հետո Վահե Գրիգորյանը և համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Արտյոմ Գրիգորյանը պատասխանեցին ավագանու անդամների և քաղաքացիների հարցերին և տրվեցին լրացուցիչ պարզաբանումներ բյուջեում ամրագրված հատկացումների վերաբերյալ:

Քանի որ տարեկան բյուջեում չկան հասցեական հատկացումներ, ապա Տավրոս և Տարոն -3 թաղամասերի բնակիչների առաջարկություններն առ այն, որ ասֆալտապատվեն իրենց փողոցները, տրվեց պարզաբանում, որ դա այլ գործընթաց է և պետք է որոշվի 2020 թվականի ընթացքում կապիտալ ծախսերի պլանավորման ընթացքում: Ավագանու անդամ Վահե Կոռյանը ևս ներկայացրեց բնակիչների կողմից նման առաջարկ:

Ավագանու անդամ Մելյան Ղամբարյանը կրկին անգամ հիշեցրեց, որ առանց քաղաքային հանրային գույքարանների հնարավոր չէ զարգացնել զբոսաշրջությունը: Քանի որ նման ծրագրային նպատակ ներառվել է համայնքի զարգացման քառամյա ծրագրում, կայացավ համաձայնություն աշխատակազմ-ավագանի համագործակցությամբ գտնել լուծման տարբերակներ, որոնք թույլ կտան շահագրգռել գործարարներին, քաղաքում նման ծառայություն կազմակերպելու նպատակով:

Ավագանու անդամ Հայկազ Միմիկյանն առաջարկեց բյուջեից հանել շուրջ 8 մլն դրամ հատկացումը Հայքի հրապարակի շատրվանների սպասարկման ծախսերը ֆինանսավորելու համար (կող՝ 06-3-1, տող 4238 «Հայքի հրապարակի ջրավազանի սպասարկում»), քանի որ դա մրցույթում հաղթած կապալառուի երաշխիքային սպասարկման պարտավորություն է: Քննարկումը վարողը նշեց, որ սպասարկման խնդիրն առկա է, գոյություն ունի հեղինակային իրավունք և սպասարկումը չի կարող իրականացնել այլ կազմակերպություն, քանի որ կլիսախտվի երաշխիքի պայմանները: Որոշվեց լրացուցիչ ուսումնասիրել և քննարկել այս հարցը մասնագետների և կապալառուի լիազոր ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանրային քննարկումն ավարտվեց ժամը 12.10-ին :

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝

1. Ավագանու անդամներ

- Մելյան Ղամբարյանը
- Վահե Կոռյանը
- Հայկազ Միմիկյանը
- Դավիթ Հակոբյանը

2. Համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Արտյոմ Գրիգորյանը

3. Համայնքի աշխատակազմի բաժնի պետեր և բաժինների աշխատակիցներ՝

- Վահե Գրիգորյանը
- Էդիկ Հովսեփյանը
- Արման Մովսիսյանը

- Լուսինե Ստեփանյանը
 - Մարինե Չատինյանը
 - Լիլյա Դավթյանը
 - Հերմինե Զարմանյանը
 - Լիլիթ Խաչատրյանը
4. Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Դինարա Մխոյանը
5. Ինչպես նաև՝
- Էրիկ Օհանյանը
 - Վարդան Դովաջյանը
 - Դավիթ Այվազյանը
 - Արտակ Հարությունյանը
 - Արմենուհի Բարսայանը
 - Աննա Անդրեասյանը
 - Գարուշ Սաղաթեյանը
 - Հայկազ Պետրոսյանը
 - Ժորա Գևորգյանը

Արձանագրությունը կազմակերպեց
Արձանագրությունը կազմեց



Արթուր Օհանյանը



Էրիկ Հովսեփյանը